



69. 7100 4. 5. 6. 7. 8. 9. 10. 11. 12.

1. Ուշագրաւ շրջան մը բնդ մէջ պատրիարքական ըմբռութեան և հանդիսաւոր մուտքին ի
Վենետիկ. - 2. Եւ. Արք. երամացման դատի գործերուն երախայրելը. - 3. Կասակցութիւնը Եւ.
Ուլտի Հաստատութեան երկղարեակի հանգէսներուն. - 4. Ս. Պետրոսի Գահուն վրայ. - 5. Ազգա-
միկ օրհնութիւն մը. - 6. Շահեկան ունկնդրութիւններ. - 7. Զահանայութեան Ռսկելէն Յօրեւեանը
և Հայ Կաթ. Նուիրապետութեան մասնակցութիւնը. - 8. Հայկական յուշեր օրագրական էջերէ. -
9. Տպաւորութիւններ մահուան և թաղման օրերէն. - 10. Մեծագործութիւններ. - 11. Սրբութեան
համբաւը. - 12. Հոգեկան ցուրեր. - 13. Հրաշքներ. - 14. Կանխագուշակութիւններ

1908	18	Սեպտ. Յիսմամեակ Բահանայութեան
1908	16	Նոյ. 25-ամեակ Եպիսկոպոսութեան
1914	20	Օգոստ. Մահ

Կենսադիր մը կը զրէ՛:

«Զէ եղած երբեք «Ծառայ Աստուծոյ»
մը՝ որ այնքան մեծ խնամով ու խոր
յարգանքով մը ուսումնասիրուած ըլլայ՝
ինչպէս եղած է Պիոս Ժ. »¹:

Պատկառելի դու՛մար մը, որ ինքնին շատ
բան կ'ըսէ անոր կեանքի բովանդակ չըր-
ջանին՝ առաքելական զործունէութեան,
հոգեկան զմայլելի արժանիքներուն եւ ի-
մաստուն ու քաջարկուն Հովուապետու-
թեան, ինչպէս նաեւ յետ մահու մեծ համ-
բաւին չուրջ: Հետզհետէ պիտի ջանամ
կարգաւ ցուցնել իր սրբութիւնը կերտող
ակունքներէն զլիաւորները:

Սակայն մեր ընթերցողներուն ընդհա-
նուր ծանօթութիւն մը տուած ըլլալու հա-
մար անոր կենսագրական գիծերու մասին՝
կու տամ իր կեանքի զլիաւոր հանդրուան-
ները:

1835	2	Յունիս. Ծնունդը ի Ռիեզե
1847	4	Ապրիլ. Առաջին Հաղորդուքին
1850	13	Սեպտ. Զգենումն կերական տարազի
1858	18	Սեպտ. Քահանայական ճեռնադր.
1858	29	Նոյ. Օգն. ժող. պետի ի Թումպոլոյ
1869	14	Յուլիս. Ժողովրդապետ Սալցանոյի
1875	28	Նոյ. Կանոնիկոս ի Թրեւիզ
1884	16	Նոյ. Եպիսկոպոս Մանքովայի
1893	12	Յունիս. Կարտինալ
1893	15	Յունիս. Պատրիարք Վենետկոյ
1903	4	Օգոստ. Քահանայապետ

1. **Գրուբեանս համար օգտուած եւ գլխաւորապէս Ս. Գիւրլամոս Գալ-ի հետեւեալ երկու մասեաներէն.**
«Pio X. il Papa santo», Firenze, 1940 եւ «Beato Pio X. Papa», Padova, 1951.

Նկատելով որ այս սրբակենցաղ Քահա-
նայապետը յատուկ սէր ունեցած է Մեծին
Մխիթարայ Միաբանութեան եւ Հայ աղ-
ղիկն հանդէպ, մանաւանդ որ մեր ընդհա-
նուր ցուցադրութեան մէջ հետեւած պիտի
ըլլանք միւս կողմէն նախ ներկայացնել,
կարգի մը՝ կողմէն նախ ներկայացնել,
թէ ինչպէս սկսած է այդ ծանօթութիւնը
եւ ինչ զբաղում կը տածէր անոնց մա-
սին:

սին :
Ներսուի ինծի որ ասոնց մասին քաղեմ
կարդ մը յուշեր ալ շուրջ 20 տարիներ աե-
ւոյ իմ ահճնակաւն Օրատրու թիւննեւրէն :

Պիոս Ժ. ի մէջ այդ ծանօթութիւնը ծայր
տուած էր, ինչպէս Ղերբին է զուգահեռ,
վէնէնտիկի պատրիարքութեան իր ատաջին
օրերէն:

օրերէն։
Ընդմէջ պատրիարքական ընտրութեան
և ընտրակալին հանդիսաւոր մուտքին ի վե-
նետրիկ՝ շուրջ երեք տարինեւոյ Աթոռի
պատրիարքին մը կար։ Այդ բացառիկ վի-
ճակին շուրջ կ'արժէ որ հետաքրքրական
տեղեկութիւն մը արձանագրուի հոս, ինչ
որ ինքնին յայտնութիւն մը կրնայ նկատ-
ուիլ վիաններէ հաստատուած։

Կարտինալ Տոմենիքոյ Ակոսթինիի մա-
հէն վերջ (31 Դեկտ. 1891) վենետիկոյ պա-
տրիարքական Աթոռը թափուր կը մնար
զբիթէ երեք տարի՝ կառավարական ձեւա-
կերպութեան մը պատճառաւ՝ մինչև յա-
ջորդէին՝ Կարտինալ Ճիուզելիիէ Սարթոյի

Համբուրեցինք մեծարանքով զղանցքն ու Ս. Աջը: Ժպտաղին լսեց երբ Գերայ.ը զատ զատ ներկայացուց երկուքնին:

Բիշ վերջ երբ կրկին մեծարանքով ձեռքն համբուրած դուրս կ'ելլէինք Արբաճօր ետեւէն՝ մենք երկու հետեւորդներս անգամ մը եւս դառնալով գլուխն խոնարհեցուցինք, եւ ահա Պիոս Ժ. մեղի դարձած ամի շարժումով մ'ըստազատական բարբառով ու զուարթօրէն. «Ciao» (= Ի տեսութիւն):

10 Յունուար 1914. — Հ. Դանիէլ վրդ. շատ հաճելի անակնկալ մ'ըրաւ ինծի եւ Ստեփան եղբորս, որ յետ աւարտելու Թորինոյի համալսարանին իր ընթացքը՝ ղեռ Պոլիս չմեկնած Հոռոմ եկաւ զիս տեսնելու: Վ. Հ. Դանիէլ Ունկնդրութեան տոմսակ մ'առեր էր որուն վրայ գրուած էր. «Padre Leonzio col suo fratello» — Քաջանայապետի նախասենեակին մէջ երեսուն հոգիի չափ կայինք, շուրջը շարուած ու ծնրադիր. ես ու եղբայրս ալ քով քովի էինք: Պիոս Ժ. որոշեալ ժամուն ներս մտաւ իր պատուական հետեւորդներով: Սկսաւ շրջանը զիմացի կողմէն, տալով ձեռքը համբուրելու իւրաքանչիւրին: Չորս — հինգ հոգի վերջ իր ակնարկը դարձուց մինչեւ միւս ծայրը մնացողներուն. նշմարեց զմեզ եւ մինչ մէկ կողմէ շրջանը կը շարունակէր՝ ինծի դարձած կը կրկնէր իմ տոմսակին վրայ գրուածը. Anche lei è venuto col suo fratello? այդ ուշադրութեան վրայ եղբայրս ու ես ապշած մնացինք. իսկ ուրիշները դարմացեր էին ցոյց տրուած ընտանութեան վրայ: Ու շարունակեց Ս. Հայրը ղեռ կատակաձեւ. «Da dove ha avuto il biglietto? Da Mons. Bressan?» — «Sì, Santo Padre» պատասխանեցի: Հասաւ մեր առջեւ. կեցաւ, նայեցաւ ժպտաղին եւ օրհնեց զմեզ եւ մեր սրբ. առարկաները:

2 Փետրուար 1914, Տեառնքնդատաջ. Հ. Դանիէլ Վ. ի հետ դարձեալ մոմ տարինք Ս. Հօր. այս անգամ ամէն բան անշուք էր, որովհետեւ Սրբ. Քաջանայապետը տկար ըլլալով՝ ընկալեալ հանդէսով չկատարուեցաւ վաղեմի արարողութիւնը, եւ ոչ Concistoro-ի դահլիճին մէջ: Բոլոր ներկայացուցիչները

բաժնուած ու կարգաւորուած էին նախասենեակներուն մէջ: Մենք Բենեդիկտեանց խումբին մէջն էինք: Ս. Հայրը Պիոս Ժ. եկաւ իր հետեւորդներով, ու բացարձակ լուութեան մը մէջ, շրջանը՝ բաւ բոլոր նախասենեակները: Իր ձայնը լսուեցաւ միայն մեր առջեւ. «Eccoci».

10 Փետրուար 1914. — Այսօր, իրիկուան մօտ, Հ. Դանիէլ Վ. առանձնական Ունկնդրութիւն ունեցաւ Սրբ. Քաջանայապետէն: Միարանութեան կողմէ հրաման խնդրեց, իր (Ս. Հօր) կարգադրութեամբ հրատարակուած Քրիստոնէականին հայերէն թարգմանութիւնը մեր վարժարաններուն մէջ դորձածուելու համար: Նախապէս առնուած էր արդէն դրաւոր կերպով հայ թարգմանութեան իշխանութիւնը՝ Վատիկանի Պետական Քարտուղարէն:

Պիոս Ժ. ամենայն սիրով եւ յօժարութեամբ կ'ընդունէր այդ խնդիրքը ու զրիշն առնելով թուղթի մը վրայ կը գրէ իր թոյլտուութիւնը յետ քանի մը քաջալերական խօսքերու, ու Հ. Դանիէլ Վ. ի կը յանձնէ այդ հրամանադիրը:

1914 (օր եւ ամիս?). — Հ. Մինաս վրդ. Նուրիխան առանձնապէս կ'ընդունուի Սրբ. Քաջանայապետէն եւ Անոր կը նշուի իր աշխատասիրած Միթար Արբաճօր խառնէրէն վարքէն օրինակ մը փառակաղմ, առ Որ նուիրուած էր հրատարակութիւնը, ինչպէս կը տեսնուի ճակատէն: Հ. Մինաս Վրդ. ի ընկերեց Հ. Գարրիէլ Վրդ.:

Սարինայի բարձունքներուն վրայ Փոճճիոյ Քաղինոյ — հիւր էի Քաջանայապետական Լեւոնեան վարժարանին մէջ՝ երեք շաբաթ է վեր՝ իր բացառիկ դասախօս Հայ եկեղեցւոյ շարականներու երբ հասաւ Պիոս Ժ. Քաջանայապետի մահուան տխուր բօթը (20 օգոստ. 1914), տեղի ունեցած ժամը 13, 15-ին: Այդ գոթը մոռցուց մեղի օրուան ամառնային հեղձուցիչ տաքը:

Յաջորդ օր, Գերայ. Գոյունեան եւ Գերայ. Նաղլեան Արքեպիսկոպոսները Հոռոմ իջան, օր մը վերջն ալ Տեսուչ Մոմճեան Տէր Յովսէփ Վրդ. ու ես:

Մեր գործակալ Վ.ը փութացեր էր արդէն մուտքի երկու տոմսակ հոգալու: Իրեն հետ մեկնեցայ Ս. Պետրոս: Ընդարձակ հրապարակը ծածկուած էր մարդկային բազմութեամբ. ամէնուն դէմքը, ամէնուն խօսքը թախծութեամբ լեցուն էր. իսկ քարտաւաճառներու մրցումը իրարու հետ անօրինակ էր: Այդ քարտերը միակ տեսարան մը պարզեր էին. Հանդուցեալ Քաջանայապետը մահուան անկողինին մէջ: Այդ օրէն ի վեր՝ իրրեւ յիշատակ՝ հատ մը պահած եմ քովս, վերի աջակողմեան անկիւնը տպուած սա իմաստալից խօսքերով:

Sono nato povero, sono vissuto povero, voglio morire povero.
Prego la Santa Sede di voler passare lire trecento mensili alle mie sorelle.
Non voglio essere imbalsamato⁸.

Pio PP. X

Այս հեղահամբոյր Պապն էր որ Ս. Պետրոս տաճարին Պեղինեան ճառագայթաձեւ «Փառք»ին մէջ պատկաւորուեցաւ «Երանելի» տիտղոսով:

Օրագրութիւնս կը նկարագրէ Պիոս Ժ. ի թագման արարողութեան առթիւ վատթիւ Կանեան Տաճարին մէջ գտնուող պաշտօնական բազմութիւնը, ու կ'ըսէ, թէ ինչպէս ստորագրողս ալ հետեւելով ուրիշնեւ օրինակին՝ ճիշդ թափեր է Ս. Հայրը ղուութեան խորանի վանդակապատ դրան ճեղքեղէն ներս երկարել ու դպցնել ձեռքն ու վարդաբանը վախճանեալ սուրբ Քաջանայապետի ոտքերուն: Այդ օրն իսկ արդէն կը գրեմ, թէ «Սրբութեան մեծ համբաւով կը խօսուի ամբողջ Հոռոմի մէջ Պիոս Ժ. ի վրայ»:

Եւ իրօք, այդ համբաւուած սրբութիւնը փայլած էր եկեղեցական ամէն աստիճաններուն ու թեւակոխած ամէն ասպարէզներուն մէջ, եւ որուն փառաւոր պատկումը

⁸ Աղքատ ծնայ, աղքատ աղքեցայ, աղքատ կ'ուրեմ մեռնի:
Սուրբ Աթոռէն կը խնդրեմ որ հաճի ամսական երեք հարիւր լիրա անցընել իմ քոյրերուն:
Չեմ ուզեր զմաւաւելի:

պահուած էր Քաջանայապետութեանը մեծ տառանմեայ դժուարին շրջանին, յորում հոյակապ գործերով պայծառացուց Աստուծոյ Տունը ու զձեց, սահմանեց ճշգրիտ ծրագիրներ՝ մարդկային անհատական եւ ընկերային կեանքի օրըստօրեայ բարեփոխման:

Այդ սրբութիւնը քրիստոնէական կեանքի հրաւիրեց, սրբութեան յորդորեց առհասարակ ամէն զասակարգ: Յորդորեց ըով, Շրջաբերական թուղթերով ցուցուց լուսաւոր ուղիներ. անվեհեր պաշտպանեց եկեղեցւոյ դերագոյն շահերը. զգուշացուց ազգեր, ժողովուրդներ խաւարած ըսկզբունքներէ, մոլոր վարդապետութիւններէ: Այսպէս հետզհետէ յառաջ եկան ներքէ: Այսպէս հետզհետէ օրէնքներ, Սահմանադրական իմաստուն օրէնքներ, կարգադրութիւններ, Կոդեքսներ, որոնց կարգադրութիւն Սրբ. Երաթը՝ մէ են՝ Բարեկարգութիւն Երաթը, Վերանորոգութեան, Սուրբ Գրոց Կաճառ, Վերանորոգութեան Քրիստոնեայ ժողովրդային բողոքութիւն Կրօնադիտութեան, Գործոց, Ուսուցում Կաթողիկէ Գործոց ի վերակազմութիւն Կաթողիկէ Եկեղեցական Օտալիա, Դասաւորութիւն Եկեղեցական Օրէնսդիտութեան, Յաճախակի եւ ամէնօրէնսդիտութեան առ Ս. Հայրը ղուութիւն, եւ մերձեցում առ Ս. Հայրը ղուութիւն Բարեկարգութիւն Երաթը, Սրբութեան Սրբութեան Եկեղեցիկներ, Մանուկներու Հայրը ղուութիւն, եւ ներքէ, եւ այլն: Իսկ ի հարկին՝ խոնարհ եւ ալին, եւ այլն: Իսկ ի հարկին՝ խոնարհ եւ հեղահամբոյն նկարագրով այս Քաջանայապետը՝ քրիստոսաւառ հոգեով ծառացաւ, պետք տուաւ հաւատքի եւ ճշմարտութեան թշնամիներուն դէմ. հայրական կուրծք տուաւ հաւատքի եւ ճշմարտութեան օրէնքներ, հերձուածներ. դատաւարմառ օրէնքներ, հերձուածներ Պետութեան տեց եկեղեցւոյ բաժանումը Պետութեան ի Ֆրանսա, նոյնպէս 65 արդիապաշտ առ Պապին, Սրբապաշտութիւնը, ի ռաջարկներ, Արքեպիսկոպոսութիւնը, ի Փոլիս, Եկեղեցւոյ դէմ մաքառող փոթութեամբ. Եկեղեցւոյ դէմ մաքառող փոթութեամբ. դատաւարտեց նաեւ հալածանքները. դատաւարտեց մէջ արտաքին վէճ Պապին ժողովրդին մէջ արտաքին վէճ Պապին ժողովրդին մէջ:

Եւ իրօք, այդ համբաւուած սրբութիւնը փայլած էր եկեղեցական ամէն աստիճաններուն ու թեւակոխած ամէն ասպարէզներուն մէջ, եւ որուն փառաւոր պատկումը

րուն՝ որոնք բազմաթիւ ալ էին: Անոնց հանդէպ վարուեցաւ միշտ աւետարանական հոգւոյն ու կենցաղին համաձայն: Այսպէս իր Քահանայապետութեան օրով ուղեց եւ յանձնարարեց իր աղգականներէ իւրաքանչիւրին՝ շարունակել ապրիլ իրենց աղքատ ու ծածկեալ կեանքը: Երբ առաջարկուած է իրեն, թէ ի՞նչ աղնուական տիտղոս կը խորհէր տալ իր բարեպաշտ, ամուրի ու խոնարհ քոյրերուն, որոնք միշտ իր կեանքի օրերուն միասին եղած էին՝ կը պատասխանէ. կոչեցէ՛ք զիրենք Պապի Գոյրեր:

Ճիշտ այս քոյրերուն ինքնաշարժ մը նըւիրուեր էր հարուստ ամերիկացիէ մը: Կ'իմանայ Պիոս Ժ. ու ժպտով մը կ'ըսէ. «Աղուոր բան պիտի ըլլար տեսնել Պապին քոյրերը որ ինքնաշարժով կը շրջին Հռովմայ մամբաներուն մէջ»: Երբ թոռնուհին կ'ականարկէ թէ ի՞նչ չարիք կայ ատոր մէջ՝ կը պատասխանէ. «Ըլլալիքդ աս է որ ինձի մեծ տիպանքիս պիտի պատմաւորէ»: Քանի մը օր վերջ ինքնաշարժը վաճառուած է:

Իր Անճէլոյ եղբայրը Քրեմոնայի մէջ փառաւոր դպրոց մը կը ղեկ իր երկու որդի դարձուհները, բայց չկարենալով ամսականները վճարել՝ կը դիմէ Եղբորը. «Ի՞նչ որ է, քող անցնի այս անգամ՝ կ'ըսէ Պիոս Ժ. - պէտք է որ վատ տպաւորութիւն քողուս. բայց պէտք է որ անմիջապէս յետոյ հանես զիրենք այդ վարժարանէն, վասնզի մենք աղքատ ենք»:

Մեծ բարեբար մը զգալի դուժար մը կը ղեկ Պիոս Ժ. ի տրամադրութեանը, որ պէտք ինչ բանի որ ուղէ գործածէ: Արդար եւ հեռատես Քահանայապետը իսկոյն ալ զուժարը Եկեղեցւոյ՝ եղած համարեքոյ, այլ Պապ ըլլալու համար. միտք չունիմ իմ ազգականներու անցընել այդ գումարը՝ ըսած է:

Ըլլալ Սալցանոյ կամ Մանթովայ, կամ Վենետիկ՝ ինչ որ ունէր աղքատներու կուտար: Ու եթէ ցաւ մ'ունէր այն էր, որ րենար տալ:

Կարելի՞ է երբեք սրամիտ, կատակաբան ու ծիծաղաշարժ խօսքերէ եւ արտայայտութիւններէ ալ սրբութեան ակնախըտիղ ցոլքեր սպասել:

Եւ սակայն անոնք ալ Եր. Պիոս Ժ. ընտանի նկարագրին մաս կը կազմէին: Սրբութեանը տարրեր կը հայթայթէին հասարակէս:

Ահա քանի մը օրինակներ. Վենետիկ իր Պատրիարքութեան օրերէն Ուխտիս Հայրեր կը պատմեն յուշեր իրենց պատանեկան շրջանէն, որ երբ իրենց վարակացու վրդ.ին հետ կ'երթան դատարան Պատրիարքարան եւ կու տան - բոլոր Վերութեան - Աստիճանաց քննութիւնը վսեմ. Պատրիարքը պատուասիրելով համար իր երիտասարդ հիւրերը՝ իր թանձր սուրճ կը լեցնէ ու կը բաշխէ նոնցմէ իւրաքանչիւրին: Ապա բարձրագոյն ընթացքի մաղթանքներով կ'ըսէ ալ Միսիթարեան խումբին. «Andate a Roma», վերակացուն ալ դարձած՝ «Mandate a Roma»:

Անգամ մը իրեն «Papa Santo» ըսողներ կը պատասխանէ չնորհալի կատակով. «Բաղձաճանի մը սխալ կայ. ես Papa Santo չեմ, այլ Papa Sarto»:

Կ'ըսեն որ իր սեղանը չափ պարզ ու սակաւապէս ըլլալով՝ երբեմն կը դռնաբան քիչ մը պանիր ու պտուղ եւ ընկոյզ ուտելով: Իսկ եթէ յանկարծ «lusso» ըմպելիք մը բերէին՝ չէր առներ. «Ատիկա քուստներու կը պատկանի» ըսելով:

Օր մը իր ականջն հասեր էր թէ իր քաղաքականութիւնը նկատուեր է ոմանցի «բարի զիւղացի Ժողովրդապետի»: Պատասխան կրնաք դուշակել որ տուած ըլլայ. «Գիտեմ որ քաղաքագետ մը չեմ՝ կ'ըսէ քաղցրաժպիտ ու դուրսից, - այլ պարզ Եպիսկոպոս մը. գիտեմ որ կ'ըսենք թէ բան չեմ հասկնար, թէ պարզապէս զիւղացի մըն եմ. կարեւորութիւն չեմ տար: Ես մէկ մամբայ մը, միակ տեսակէտ գիտեմ. հաշիւութիւնը»:

Աղջկան մը անդամալոյժ ոտքերուն հալուեցնեն Պիոս Ժ. մէկ գուլպան, որ մէ իսկոյն առողջութիւն կը գտնէ: Հարցնելով ինչպէս, կատակելով կ'ըսէ. «Խնդալի՛ք բան. ես ամէն օր կը հագնուիմ գուլպաներս՝ եւ կը շարունակուիմ ոտքերը: Ուրիշները իմ գուլպաներս հագնուին՝ ցաւերնին կ'անցնին»:

Բազմաթիւ են Եր. Պիոս Ժ. չնորհալի

եւ առողջութիւն ստացողներու դէպքեր եւս. ու զլիաւորապէս վատիկանեան Ունիւնը իրենց շրջանին, աջահմարտի պահուն եւ կամ զգեստներուն դաշնու հետեւանքով, որուն համար ինքը «Գերագոյն Բաժնիներու գորութիւնն է, կ'ըսէր անդադարձողներուն, ես մէջը գործ չունիմ. շնորհիք խնդրողին հաւատքն է»:

Քանի մը դէպքեր շարունակենք ղեռ. Իր Քահանայապետական ընտրութեան օրն իսկ Պիոս Ժ. կը բժշկէ Պապընտի Ժաղով կարտինալներէն մէկը, Վալենցայի (Սպանիա) 80ամեայ Արքեպս. Հերբէրոյ ի Էսփինոզան, որ մահացու հիւանդացի էր: Ուստի հազիւ ընտրուած՝ հիւանդոսի կ'երթայ, ու դաշնու ճակտին կ'օրհնէ զինքը: Հիւանդը երեք օր վերջ ոտք կ'ելլէ ու բժշկուած կը վերադառնայ Սպանիա, «Կեանքի եկայ Պիոս Ժ. մէկ օրինութեամբ» ըսելով:

«Գնա՛, վստահութիւն ունեցիր Աստուծոյ վրայ... հաւատք ունեցիր. Աստուծոյ գեղ պիտի բժշկէ». եւ ահա անդամալոյժ զինք պիտի բժշկէ. եւ ահա անդամալոյժ զինք մը կեանք կ'առնէ ու կը բժշկուի: «Մայրի՛կ, բժշկուեցայ», կը գոչէ զերութեան ատեն իր ձեռքը անոր զլիսուն վրայ դրած եւ օրհնած էր:

Պիոս Ժ. ի. «Ի՞նչ կ'ուզես՝ որ ինձմէ աւելի լաւ ես» խօսքին վրայ՝ կատարեալ առողջութիւն կը գտնէ, 1912-ին, թոքախտաւոր կուսան մը, յետ բժշկութիւն խնդրած ըլլալուն:

Իսկով նորընծայուհի մը վատառողջ վիճակը որ օրէ օր կը ծանրանար՝ Ս. Հայրը կը ղեկ ձեռքը անոր զլիսուն վրայ ըսելով. «Բայց ինչո՞ւ համար աղէկ չես. լաւ պէտք էս ըլլալ, հասկցա՞ր». հիւանդը անմիջապէս կը գտնէ առողջութիւնը:

Աղքատ մայր մը իր կոյր դուստր Երանելոյն ներկայացնելով առողջութիւն կ'աղբարէ. «Աղօթէ, հաւատք ունեցիր» խօսքին վրայ՝ անմիջապէս կը բացուին անգամ ատենայ աչքերը, որոնք առաջին անգամ կը դիտեն Պիոս Ժ. ի ճառագայթող դէմքը:

Նոյնպէս 50ամեայ գերմանացի մը ի ծընէ կոյր՝ Ունիւնը պահուն պահուն բժշկուի կը գտնէ, երբ Ս. Հայրը անոր զրթախտութիւնը լսելուն՝ աջը կը ղեկ անոր աչքերուն վրայ:

«Ի՞նչ կ'ուզես որ ընեմ քեզի», կ'ըսէ կուսանի մը՝ որ քաղցիկը ձեռքը երկաւած իրեն կը ցուցնէր: «Մի միայն օրինութիւն մը» կ'ըլլայ կուսանին պատասխանը: Ու Պիոս Ժ. հանդարտօրէն խաչանիշ կ'օրհնէ: Հիւանդը տուն դառնալով մէկգի կը ղեկ այլեւս կապերը:

«Հաւատք, տիկիւն, հաւատք». բաւական կ'ըլլան այս բառերը որ կատարեալ պէս իր լսողութիւնն ստանայ պատանեակ մը իր մօրմէն առաջնորդուած:

Ունիւնը թեանց նախասենեակի մը մէջ աղեխարշ տեսարան մը կը պարզէ, հօր եւ մօր միջեւ, անդամալոյժ պատանեակ մը՝ Գերմանիայէն բերուած: Պիոս Ժ. իր անցքի պահուն կը տեսնէ զանկա զետնի վրայ դրուած: Վար կը ծռի ու քաղցրօրէն կը հարցնէ թէ ի՞նչ ունի: Հազիւ իմացած կը ծռի ու կը բռնէ անոր ձեռքերէն դէպի վեր. «Քե՛զ տեսնեմ... քե՛զ տեսնեմ... վեր. վեր... պէտք է քալել»: Նոյն վեր, վեր... պէտք է կանգնի կատարեալ վայրկեան տղան կը կանգնի կատարեալ պէս ողջացած ոտքերուն վրայ:

Բազմաթիւ են այն բուժումները որոնք արդիւնք են պարզապէս հեռուէն տրուած քահանայապետական օրհնութեան:

Հապա ըրած դուշակութիւններն ու զաղտնիքներու կանխագիտութիւնը...

Ահա մէկ քանի օրինակներ. մեծաւորը Հռովմայ Թրէֆոնիթանայի մեծաւորը Պիոս Ժ. ի կ'ելլէ. բայց ղեռ խօսել չսկըսած՝ Ս. Հայրը կ'ըսէ իրեն. «Խնդրոյն մէջ՝ որուն համար ինձի եկած ես՝ հետեւեալ կերպով շարժելու ես». ու առանց եալ կերպով շարժեալ ըլլալու՝ կու տայ ականապէս տեղեակ ըլլալու՝ կու տայ անոր ճշգրիտ խորհուրդները:

Տոն Օրինէն յետ նախապէս ապահովցրեալ Ունիւնը ի վայրկեանները՝ ղեռ վատիտրամադրելի վայրկեանները մը վրայ կան չհասած խոստովանանք մը վրայ անմեքձակայ եկեղեցւոյն մէջ, վատնդի անմեքձակ էր Ս. Պետրոսի մէջ տրամադրեալ խոստովանաճայր գտնել: խոստովանաճայր բարի ծերունի՝ կը սկսի երկար քաջաջրը բարի ծերունի՝ կը սկսի երկար քաջաջրը իր խրատը, այն ատենապէս յայտաբերէ իր ստիպուի իր տաղնապը յայտ-Օրինէն կը ստիպուի արձակումը: Ապա ներ՝ շուտով ստանալու արձակումը: Ապա չեւ ի հեւ կը հասնի վատիկան՝ ճիշտ եր-

կու վայրկեան առաջ որոշեալ ժամէն. ոչ ոք տեղեակ էր իր ներքին հոգեբանութեան: Պիոս Ժ. հազիւ կը տեսնէ զինքը ժպտալին կ'ըսէ. «Կրնայի՞ր գանց ընել խոստովանանքդ Պապին գալէ առաջ: Ուրիշ անգամ երբ խոստովանանք կ'ըլլաս՝ քիչ մը աւելի հանդարտ եղի՛ր»:

Օր մը աղջնակ մը Վատիկանի մէջ Դրոշմ ընդունելու ատեն Ս. Պապի ձեռքէն՝ յանկարծ փղձկիկ կը սկսի. Պիոս Ժ. եւս յուզուած՝ պատճառը կը հարցնէ. աղջնակը լալալին կ'ըսէ որ իրեններէն ոչ մէկը կայ վրան մտածող: Մայրը ժամանակէ մը ի վեր դատուած էր ամուսնէն որ ուրիշ կընոջ մը հետ կը կենակցէր: Պիոս Ժ. հայրաբար կը քաջալերէ, կը մխիթարէ փոքրիկը ու կ'ըսէ. «Սիրտդ հանդարտ բռնէ, վասնզի երբ տուն դառնաս՝ պիտի գտնես հայրիկդ ալ, մայրիկդ ալ»: Իրօք տուն դարձին՝ ամէն բան ճիշտ էր. հայրն ու մայրը իրարու հետ հաշտուած կը սպասէին իրեն:

Ամէնուն ծանօթ է, որ առաջին Համաշխարհական Պատերազմն ալ դուշակուած էր իրմէ, որուն առաջին զոհը՝ կրնանք ըսել ինքը եղաւ: Երբ այդ մասին կ'անդրադարձնէր իր Պետական Քարտուղար Կարո. Մերրի տէ Վալը՝ սա կ'ըսէր թէ այդպիսի նշան մը չ'երեւիր, կամ թէ առ ժամս հետու է, ու թերեւս խուսափի եւս, մինչ Ս. Ծերունին ձեռքի հանդարտ շարժումով կը պնդէր. «Էմիլենցա, պիտի չանցնինք 1914-ը»: Այս իսկ պատճառաւ երբ 1912-ին վենետիկեցի հարուստ մը Կրատիսքայի մէջ կրօնաւորական հաստատութեան մը համար կ'առաջարկէր հող մը իր ընդարձակ շինութիւններով՝ «Կարելի չէ, կը պատասխանէր, վասնզի այդ շինութեան մէջ երբ բոլոր պիտի քանդուին»: Երեք տարի վերջ պատերազմի աւեր դարձած էին անոնք:

«Պապանքը սկիզբն են մեծ պատերազմի մը՝ որմէ ես պիտի չկրնամ խուսափիլ, որուն պիտի չկարենամ ես տոկալ»: Այս մարդարէական խօսքերն ուղղած էր Ս. Աթոռի մօտ Պրադիկի Ներկայացուցիչին, երբ սա 1913-ին հրաժեշտ կ'անէր Իրմէ, ուրախակից ըլլալով որ այդ կերպով պիտի կարենար ազատիլ սարսափներէն զալիք պատերազմին՝ որ փոթորկելու վրայ է...

Կարելի չէ առանց յիշատակութեան անցնիլ յատկապէս զմեզ հայերս հետաքրքրող եղելութիւն մը, նախատեսուած ու դուշակուած Եր. Պիոս Ժ. Ծայրագոյն Քահանայապետէն յանձին Տանն Կիլիկիոյ արժանաժառանգ Ն. Վսեմ. Կարո. Գրիգոր Ժ. Աղաճանեան Կաթողիկոս Պատրիարքի:

Դէպքը տեղի ունեցած է 1908 Նոյեմբ. 1-ին Վատիկանու մէջ: «Ներկայ Կաթողիկոսը դեռ 13ամեայ Ազգաբնակչութեան կ'ըսէ «Բազմավէպ» - Լեւոնեան վարժարանի կղերիկոսներուն հետ ունկնդրութեան ընդունուած էր Պիոս Ժ. Քահանայապետին կողմէն, որ խօսելով իրենց՝ կը մաղթէր որ արժանանային քահանայութեան եւ եպիսկոպոսութեան»:

«Սրբ. Քահանայապետն անդրադառնալով Աղաճանեանի ժպիտը այդ մաղթանքին վրայ՝ ըսած էր. կը ծիծաղի՞ս. շատ լաւ, քեզի կը մաղթեմ որ ոչ միայն եպիսկոպոս, այլ նաեւ Պատրիարք (Կաթողիկոս) ըլլաս»¹⁰:

Եր. Պիոս Ժ. ի այս կանխադուշակութիւնը աննշմար չէր անցած այժմեան Գաւակալ Սրբ. Պիոս Ժ. Քահանայապետէն, երբ առ մերս Նորընտիր Հոգեւոր Տիրութեան Պալլիում շնորհելու առթիւ կ'ուղղէր իր հայրական մաղթանքները, ինչ որ նոյն ատեն արձագանգ դտաւ Հռովմայ մամուլին մէջ:

Այդ իրականութիւնը յետոյ ժամանակի ընթացքին աւելի եւս ճոխացաւ, երբ Ընդհանուր Կաթողիկէ Եկեղեցւոյ Ծիրանեփառ Իշխաններու կարգին արժանապէս դասեց Ն. Սրբութիւնը մերս նախադուշակուած Հոգեւոր Տէրը:

Այս նախատեսուած իրականութիւնը կու գայ կազմելու մեր վերոյիշեալ պատմական բոլոր դուշակութիւններուն հետ Երանելի Պիոս Ժ. ի հոգեկան լուսաշող անկունքներէն մին:

Հ. ՂԵՒՈՆԴ ՏԱՅԵԱՆ

¹⁰ Դեկտեմբեր 1937, էջ 296. - Այս միջնորդ դէպքը յիշատակուած է Հռովմայ Լեւոնեան վարժարանի Օրագրութեան մէջ (տես «Մատիս» 1951, Յուլիս 6, էջ 8):

ՔԵՐԹՈՂԻՆ ԱՐՁԱՆԸ

Զախ ձեռքը վեհ ֆակտին,
Ըստուերներուն տակ ծառերուն սխրագին,
Քերթողն՝ հակած կը մտածէ.
Խորհուրդներու ովկեանի մը մէջ բոցէ
Նաւարկելով մի՛ գուցէ...

Քերթողը հէ՛մ տըխու՛ր է,
Այ ձեռքն առած՝ իր գրքիչը փետուրէ,
Ինք կը խորհի, մինչ կ'անցնին
Քովէն գոյգեր՝ ոստոստելով ժպտագին,
Անհո՛գ, անփոյթ իր վիշտին...

Արեւմար՝ շողակա՛ր
Վերջալոյսին ցոլքերն ոսկի եւ արծաթ,
Բըռնկած են գլխուն վրայ
Որպէս դափնի, որպէս պըսակ շափիւղայ,
Մինչ քերթողը կը խոկայ:

Գիշե՛ր՝ աստղերն բարձրէն լուրբ
Դալուկ այտերն կը համբուրեն ժպտաշուրբ,
Բայց քերթողն է մի՛շտ անփուն.
Լուսինն իջած է իր դէմքին վրայ խոհուն
Մինչ կը դիտէ սեւեռուն...

Սիւզ մը կ'անցնի փափկօրէն
Զերբ սարսու՛ռ, հե՛ւք, քերթողին վսեմ հոգիէն,
Իր գլխուն վրայ քանկագին՝
Որպէս դափնի, ծաղիկ տերեւ կը քափին
Մինչ կը սպասէ անմեկին...

Թոշումներն իր մօտ իջեր
Կը նուազեն, կը դալալայեն փայտաշեր,
Կարծես սիրով կը հեղուն՝
Դեռ քերթողին չաւարտած կոյս տաղերուն
Արձագանգները բըրբոռն...

ՀՐԱՅԱՅՏ

Ս. ՓՕԼ.